DOI: 10.54503/1829-4324.2023.2-140

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշոտ Երջանիկի Ոսկանյան
Կարինե Պետրոսի Մնացականյան
Մարգո Վարդանի Ղազարյան

Հոդվածը ստացվել է՝ 02.10.23, ուղարկվել է գրախոսման՝ 10.11.23, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Ներածություն: Հոդվածի արդիականությունը: Ագրոպարենային համակարգի զարգացման գործում կարևոր դեր և նշանակություն ունեն գյուղացիական տնտեսությունները, որոնք ապահովում են ոլորտի համախառն արտադրանքի հիմնական մասնաբաժինը (94.2 տոկոս)[1]:

Վերլուծությունները և իրականացված հարցումները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսությունների արտադրական հնարավորությունների օգտագործման ներկայիս վիճակը չի նպաստում գյուղատնտեսության դինամիկ զարգացմանը և պարենային անվտանգության անհրաժեշտ մակարդակի ապահովմանը, ինչը հիմնականում պայմանավորված է ագրարային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման և արտադրական միավորների լիարժեք գործունեությունը խոչընդոտող խնդիրներով:

Հոդվածի ուսումնասիրության **նպատակն է** գյուղացիական տնտեսություններում իրականացված հարցումներով բացահայտել դրանցում ագրարային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և խնդիրները՝ առաջադրելով լուծման ուղիներ:

Հոդվածի ուսումնասիրության **խնդիրներն են** վերլուծել գյուղացիական տնտեսությունների գործունեությունը, կուտակված խոչընդոտները, հողային, ջրային, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների օգտագործումը:

Գրականության վերլուծություն: ՀՀ գյուղացիական տնտեսություններում ագրարային ռեսուրսների օգտագործման շուրջ ուսումնասիրություններ են կատարվել.

- Ա. Ոսկանյանի «Գյուղատնտեսական զարգացմանն ուղղված ինովացիոն քաղաքականությունը և տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը» հոդվածում[2]:

---

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022թ., Երևան 2022, էջ 353, https://armstat.am/file/doc/99533308.pdf

[2] Ա. Ոսկանյան, Ա. Հայրապետյան, Ա. Քարտաշյան// Գյուղատնտեսական զարգացմանն ուղղված ինովացիոն քաղաքականությունը և տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը// Материалы международной научной конференции по проблемам продовольственной обеспечености и биоразнообразия / НАУА, Пед. Кол.: Д. П. Петросян и др.- Ереван, Изд-во НАУА, 2014

- Հ. Ջավադյանի «Ագրարային խորհրդատվական համակարգերի զարգացման փորձը և կիրառման հնարավորությունները ՀՀ-ում (ԵՄ երկրների օրինակով)»[1], Գյուղատնտեսության խորհրդատվական ծառայությունների ֆինանսավորման կատարելագործման մի քանի հարցեր»[2] հոդվածներում:
- Ս. Ավետիսյանի «Պտղաբուծության զարգացումը որպես արդյունավետ հողօգտագործման կարևոր ուղղություն»[3] հոդվածում:
- «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ.»[4] ռազմավարության շրջանակներում գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվող ռեսուրսների արդյունավետության օգտագործման հետ կապված խնդիրների վերհանում և արդյունավետության բարձրացման ուղղությունների ներկայացում:
- ՀՀ Շրջական միջավայրի նախարարության և Green Climate Fund-ի կողմից «Հարմարվողականության ազգային պլան (ՀԱՊ)՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի «Հայաստանում կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսական ոլորտի խոցելիության և կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատում իրավական և ինստիտուցիոնալ դաշտ» հետազոտությունում[5] գյուղացիական տնտեսությունների հողային, ջրային և նյութատեխնիկական ռեսուրսների, դրանց վիճակի, առկա խնդիրների և ռեսուրսների վրա կլիմայական փոփոխությունների ազդեցության ներկայացում:
- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատաշուկայի ուսումնասիրություն՝ գյուղական համայնքներում» հաշվետվությունում[6] մարզային կտրվածքով հանրապետության գյուղական բնակավայրերի աշխատաշուկան և բնակչության զբաղվածության հիմնախնդիրների, աշխատանքային ռեսուրսների առկայության, սեզոնային աշխատանքի տևողության, սեզոնային աշխատանքում գյուղացու զբաղվածության աստիճանի

---

[1] Հ. Ջավադյան, Ի. Փանոսյան // «Ագրարային խորհրդատվական համակարգերի զարգացման փորձը և կիրառման հնարավորությունները ՀՀ-ում (ԵՄ երկրների օրինակով)» // Տնտեսության ժամանակակից հիմնահարցեր>> Ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 2-րդ գիտաժողով, 2014, էջ 126-130

[2] Հ. Ջավադյան, Ի. Փանոսյան// Գյուղատնտեսության խորհրդատվական ծառայությունների ֆինանսավորման կատարելագործման մի քանի հարցեր// Ագրոգիտություն, Երևան, 11-12, 2016, էջ 320-325

[3] С. Аветисян, А. Арутюнян// Развитие плодоводства как важная состовляющая повышения эффективност и землепользования// ИЗВЕСТИЯ национального аграрного университета Армении. 1(45) 2014

[4] «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն», https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf

[5] «Հարմարվողականության ազգային պլան (ՀԱՊ)՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագիր, Երևան 2020թ. http://natureic.am/Content/announcements/12692/NAP_Agriculture%20assessment%20report_arm_FINAL.pdf

[6] «ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ», հաշվետվություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հուլիս, 2007, https://employment.am/am/36/free.html

ուսումնասիրություններ: Հավաքագրվել են տվյալներ համայնքին պատկանող հողերի չափի (մեկ անձին պատկանող չափաբաժնի), դրանց պատճառով առաջացած խնդիրների վերաբերյալ:

- «Արգոմշակույթ» ամսագրի 10-րդ համարում[1] ֆերմերային (գյուղացիական) ընտանեկան տնտեսությունների ընդհանուր բնութագրի, հողային և աշխատանքային ռեսուրսների, տնտեսություններին պատկանող վարելահողերի չափերի, դրանով պայմանավորված առկա խնդիրների ներկայացում:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում օգտագործվել են դիալեկտիկական, գիտական աբստրակցիայի, հարցումների, վերլուծության մեթոդները:

Հոդվածի համար տեղեկատվական և մեթոդաբանական հիմքն են հանդիսացել հեռախոսազանգերի միջոցով 150 գյուղացիական տնտեսություններում կատարված հարցումները, անձնական հանդիպումները, ամսագրերի և տարբեր գիտական հոդվածների նյութերը:

Վերլուծություն: Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների գործունեության հաջողությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, սակայն ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումն ունի առաջնային կարևորություն, որին կնպաստի դրանց դասակարգումն ըստ խմբերի: Իրականացված ուսումնասիրություններն ու հարցումներն ուղղված են գյուղացիական տնտեսություններում ագրարային ռեսուրսների օգտագործման վիճակին ու ծառացած խնդիրներին: ՀՀ մարզերում արտադրական գործունեություն ծավալող տարբեր գյուղացիական տնտեսությունների շրջանում, նախապես կազմված հարցաթերթիկների հիման վրա, իրականացվել է հարցումներ անմիջական հանդիպումների և հեռախոսային հարցախույզի միջոցով, որին մասնակցել են 150 տարբեր մասնագիտացում ունեցող գյուղացիական տնտեսություններ[2].

---

[1] «Ագրոմշակույթ» գյուղատնտեսական պարբերական, # 10, CARD, http://agromshakuyt.card.am/%D5%A8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%86%D5%A5%D6%80%D5%B4%D5%A5%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5/

[2] Ընդգրկվել են հանրապետության բոլոր մարզերից գյուղացիական տնտեսություններ հետևյալ տեսակարար կշիռներով. Շիրակ՝ 13,3%, Կոտայք՝ 13,3%, Արարատ՝ 15,4%, Սյունիք՝ 8,0%, Արմավիր՝ 9,0%, Արագածոտն՝ 10,0%, Գեղարքունիք՝ 10,0%, Տավուշ՝ 6,7%, Լոռի՝ 6,7%, Վայոց ձոր՝ 6,7%:



Գծապատկեր 1. **Հարցմանը մասնակցած գյուղացիական տնտեսությունների արտադրության կազմակերպման ուղղությունները**

ՀՀ գյուղատնտեսությունն արտադրական ներուժի օգտագործման և հողօգտագործման տեսանկյունից դեռևս ցածր մակարդակ ունի: Վարելահողերի նպատակային օգտագործումը 2022թ. կազմել է 47,93%, 2021թ. նկատմամբ կրճատվել՝ 3,33 տոկոսային կետով (բացասական միտումը շարունակվել է): Մասնավորապես՝ հացահատիկի և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները 2022թ. 2021թ. համեմատ կրճատվել են 8,4%-ով կամ 10,5 հազ. հա-ով, կարտոֆիլի ցանքատարածությունները՝ 4,3%-ով կամ 0,86 հազ. հա-ով, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 2%-ով կամ 0,39 հազ. հա-ով, բոստանը՝ 8,9%-ով կամ 0,4 հազ. հա-ով, իսկ կերային մշակաբույսերինը՝ 4,4%-ով կամ 2,5 հազ. հեկտարով[1]: Հարցմանը մասնակցած 50 տնտեսություններ երաշտի, ցրտահարության և ցածր եկամտաբերության պատճառով կրճատել են ցանքերի տարածությունները՝ նպաստելով վարելահողերի ոչ նպատակային օգտագործմանը: Ուստի կարևորում ենք վարելահողերի չօգտագործման պատճառների վերհանումը և դասակարգումը՝ օբյեկտիվի ու սուբյեկտիվի:

Աղյուսակ 1

Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային չօգտագործման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները

Հ/Հ	Օբյեկտիվ պատճառներ
1.	Բնակլիմայական պայմանները
2.	Իրավական դաշտի անկատարությունը
3.	Հողերի հաշվառման և դասակարգման չափանիշների բացակայությունը
4.	Գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության կանոնակարգային դժվարությունները

[1] Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2022 թվականին, ՀՀ ՎԿ, Երևան 2023թ., https://www.armstat.am/file/article/29_gt_2022.pdf , Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2021 թվականին, ՀՀ ՎԿ, Երևան 2022թ., https://www.armstat.am/file/article/29_gt__2021.pdf

5.	Ոռոգման ջրի բաշխման կառուցակարգերի անկատարությունը
6.	Սերմնաբուծության համակարգի անկատարությունը
7.	Ագրարային ներդրանքների բարձր գներն ու դրանց բացակայությունը
8.	Գյուղատնտեսական տեխնիկայի և ֆինանսական միջոցների պակասը
9.	Տեխնիկայով ծառայությունների մատուցման բարձր գները
10.	Որակյալ մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության պակասը
11.	Մասնագիտական կադրերի պակասը
12.	Զբաղվածության դիվերսիֆիկացման ցածր մակարդակը
13.	Աշխատանքային ռեսուրսներում երիտասարդների թվի նվազումը
14.	Իրացման հետ կապված դժվարությունները (օրինակ. սառնարանային կարողությունների անհասանելիությունը և տարածաշրջաններում դրանց պակասը, մեծածախ շուկաների օպտիմալ տեղաբաշխումը և այլն)
15.	ՀՀ սահմանային գոտու երկարության ավելացումը և այդ հանգամանքով պայմանավորված գյուղատնտեսական աշխատանքների իրականացման անհնարինությունը կամ դժվարությունները
	Սուբյեկտիվ պատճառներ
16.	ՀՀ-ից հողասեփականատիրոջ բացակայությունը
17.	Վարկային միջոցների անմատչելիությունը
18.	Տեխնոլոգիաների ներդրման և կիրառման սուղ հնարավորությունները
19.	Տեղերում այլընտրանքային աշխատանքների բացակայությունը
20.	Մշակության անհամապատասխանությունը տեխնոլոգիական պահանջներին՝ արդյունքում հողի բերրիության անկումը
21.	Սեփականատիրոջ կողմից գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության չտալը և վարձակալության դժվարությունները
22.	Ցածր եկամտաբերությունը
23.	Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու ցանկության բացակայությունը
24.	Վերապատրաստումներին և դասընթացներին մասնակցության դժվարությունները

Տնտեսությունների 47%-ն արտադրությունը կազմակերպում է չոռոգվող, 53%՝ ոռոգվող հողատարածություններում:

Հարցվողների 46%-ը զբաղվում է դաշտավարությամբ՝ մշակության ընթացքում կիրառելով միակողմանի պարարտացում (ազոտական պարարտանյութերով):

Ուսումնասիրված ոռոգելի հողատարածություններ ունեցող գյուղացիական տնտեսություններից 71-ը ոռոգումն իրականացնում է ավանդական եղանակով (47%), միայն 9-ը՝ կաթիլային ոռոգմամբ (6%):

Միաժամանակ տնտեսությունները նշել են, որ ըստ պահանջի ոռոգման ջուր չեն ստանում, քանի որ առկա են հետևյալ պատճառները.

- Ջրամատակարարման համակարգերի մաշվածությունը և քայքայվածությունը:
- Ջրամբարներում կուտակված ջրի ոչ ճիշտ ու անարդյունավետ բաշխումը:
- Արարատի և Արմավիրի մարզերի ոռոգման համակարգի մաս են կազմում խորքային հորերը, որոնք աշխատում են պոմպերի միջոցով: Խորքային հորերի պոմպերը հաճախ խափանվում են և երկար ժամանակ է պահանջվում դրանց վերանորոգման, նորից շահագործման համար, որն էլ իր հերթին

առաջ է բերում համայնքներում ջրի մատակարարման ժամանակացույցի խախտման և ոռոգման ջրի պակասի:

- Ոռոգման ջրի վարձավճարի գանձումների ցածր մակարդակը:
- Կրկնակի վճարումները՝ կապված գերնորմատիվ հողերի ջրերի վարձավճարների հետ:

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գյուղացիական տնտեսություններում իրականացվող աշխատանքներում ընդգրկվում են ինչպես ընտանիքի անդամներ, այնպես էլ վեգետացիոն շրջանում՝ վարձու աշխատողներ:



Գծապատկեր 3. **Գյուղացիական տնտեսություններում աշխատողների ընդգրկվածությունը**

Վերապատրաստումներին մասնակցության հարցին հարցվողների 15 տոկոսը պատասխանել է, որ մասնակցել է միայն պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կազմակերպված վերապատրաստումներին, իսկ 85 տոկոսը չի մասնակցել վերապատրաստման դասընթացներին՝ հատկապես Երևան հասնելու խոչընդոտների և ժամանակի սղության պատճառով:

Գյուղացիական տնտեսությունների 80 տոկոսն ագրարային տեղեկատվություն և խորհրդատվություն ստանում են տարբեր աղբյուրներից՝ հեռուստատեսություն, ռադիո, ինտերնետ, մասնագիտական ամսագրեր ու գրքեր և այլն, որոնք սպառիչ չեն և չեն ապահովում տնտեսվարողի և մասնագետի միջև փոխադարձ արդյունավետ կապ, ինչը, բնականաբար, չի բխում տնտեսավարողի շահերից: Հեռահար հաղորդակցման ժամանակ փոխադարձ կապ կարող են ապահովել միայն մասնագիտական ինտերնետ հարթակները, որին հասանելիություն ունեն փոքրաթիվ տնտեսություններ: Խորհրդատվություն ստացող տնտեսվարողների 37,5 տոկոսը տեղեկատվության և խորհրդատվության համար դիմում են առավել փորձառու գյուղացիական տնտեսություններին: Հարկավոր է արձանագրել, որ գյուղացիական տնտեսությունների ստվար մասը չի ստանում խորը մասնագիտական խորհրդատվություն, հետևաբար, որպես կանոն, բացակայում է հետադարձ կապը:



Գծապատկեր 5. **Խորհրդատվությունների ստացման աղբյուրներն ըստ հարցման աղբյուրների**

Հարցմանը մասնակցած տնտեսություններից միայն 20-ն ունեն գյուղատնտեսական տեխնիկա՝ վարի, ցանքի և բերքահավաքի ագրեգատներ:

Գյուղական համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի փոխադարձ օգտագործման մեխանիզմներ չեն կիրառվում, որի պատճառով էլ մի քանի տեխնիկա ունեցող տնտեսավարող համայնքում ունենում է մոնոպոլ դիրք, ինչն էլ ազդում է տնտեսություններին մատուցվող ծառայությունների գների ձևավորման վրա՝ հաշվի առնելով նաև պահեստամասերի, վառելանյութերի, սարքավորումների գները:

Հարցումները ցույց են տվել, որ գերփոքր և փոքր գյուղացիական տնտեսությունները, որոնք չունեն տեխնիկա, օգտվում են նման ծառայություններից, որոնց բարձր արժեքը, պայմանավորված վերջին շրջանում վառելիքի գնի բարձրացմամբ, հանդիսացել է ևս վարելահողերի չմշակման պատճառ:

Հարցվող տնտեսություններից 20%-ն արտադրությունը կազմակերպելիս օգտագործում է տեխնոլոգիական քարտի ձևաչափը, իսկ 80%-ը՝ հախուռն կերպով, բացի այդ, արտադրական ծախսերի հաշվարկ իրականացնում են հարցվողների միայն 27 տոկոսը:



Գծապատկեր 6. **Գյուղացիական տնտեսություններում արտադրական ծախսերի հաշվառման իրականացումը**

Գյուղացիական տնտեսություններն իրենց ֆինանսական միջոցները հայթայթում են հետևյալ ուղիներից.



Գծապատկեր 7. **Ֆինանսական միջոցների հայթայթման ուղիները**

Հարցման արդյունքները ցույց են տվել, որ գյուղացիական տնտեսությունները շրջանառու միջոցների համալրումը հիմնականում իրականացնում են պետական աջակցության ծրագրերի (24%) և գյուղատնտեսական վարկերի (18%) միջոցով: Մասնավորապես՝ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում ՀՀ գյուղացիական տնտեսություններին 2018թ. տրամադրվել է 5282 միավոր ընդհանուր 21,9 մլրդ դրամի վարկ, իսկ 2022թ.՝ 11838 միավոր վարկ, ընդհանուր՝ 43,2 մլրդ դրամի, աճը կազմել է 6556 միավոր վարկ՝ 21,3 մլրդ. դրամ կամ շուրջ 98 տոկոս[1]: Վերոնշյալ ծրագիրը 2023թ. հունվարի 1-ից չի գործում, իսկ վարկային բաղադրիչն ընդգրկվել է պետական աջակցության այլ ծրագրերում, որտեղ շահառուն կարող է ստանալ գյուղատնտեսական վարկ՝ ռազմավարական ուղղություններին միտված աջակցության ծրագրերի հստակ պահանջների իրականացման դեպքում:

Գիտական նորույթ: Հարցում-վերլուծություններն առաջ են քաշում գյուղացիական տնտեսությունների հայտարարագրերի լրացման, ռեեստրի վարման, տնտեսական ցուցանիշների հաշվարկման, մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության հասանելիության միջոցառումների ներդրման անհրաժեշտությունը: Առաջարկվում է.

1. Արտադրական ծախսերի, եկամուտների հաշվառման և տնտեսությունների գործունեության արդյունավետության գնահատման նպատակով՝ գյուղացիական տնտեսությունները յուրաքանչյուր տարվա հունվար ամսին նախորդ

[1] Գյուղատնտեսության աջակցության ծրագրեր 2022թ. տարեկան հաշվետվություն https://mineconomy.am/media/22735/2022.pdf

տարվա գործունեության շուրջ հայտարարագրման թերթիկների լրացում (աղյուսակ 2)՝ հետևյալ ցուցանիշներով.

- Արտադրական ծախսեր,
- Հասույթ,
- Համախառն արտադրանք,
- Իրացված արտադրանքի ծավալ,
- Անասնագլխաքանակ (դրա առկայության դեպքում):

Աղյուսակ 2

Գյուղացիական տնտեսությունների արտադրական միավորների ծախսերի և եկամուտների հաշվառման ձևաչափ

Փաստաթուղթ	Գործարքների բովանդակությունը	Ծախսեր, հազար դրամ						Եկամուտներ, հազար դրամ				
Ամիս,ամսաթիվ		Ընդամենը ծախսեր	Նյութական ծախսեր	ծառայություններ	Աշխատավարձ (վարձու աշխատողների)	ամորտիզացիա	Այլ ծախսեր	Ընդամենը եկամուտներ	Այդ թվում			
									Իրացումից հասույթը, աշխատանքը և ծառայությունը			Այլ եկամուտներ
									Բուսաբուծական արտադրանք	Անասնաբուծական արտադրանք	Այլ	
Ընդամենը												

2. Վերհանված խնդիրները ցույց են տալիս, որ առկա իրավիճակի բարելավման կարևոր միջոց է խորհրդատվական ծառայությունների մատուցումը գյուղացիական տնտեսություններին: Մասնավորապես՝ խորհրդատվական ծառայություններ կարող է մատուցել ՀԱԱՀ-ն, ինչը հնարավորություն կտա տնտեսություններին ինտեգրվել համալսարանի գիտահետազոտական աշխատանքներին:

   Խորհրդատվական ծառայությունների մատուցումը կիրականացնի համալսարանի բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և գի-

տական անձնակազմը՝ օգտագործելով նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազաները և մասնագիտացված տարբեր լաբորատորիաները:
Նշվածով պայմանավորված՝ պետական աջակցությամբ և ՀԱԱՀ մասնակցությամբ ներդնել «Գյուղատնտեսական ապրանքարտադրողներին տարեկան 100 ժամ խորհրդատվական ծառայություն ստանալու պետական աջակցության» ծրագիր, որի արժեքի 50%-ը կսուբսիդավորվի պետական աջակցությամբ, իսկ 50%-ը՝ գյուղացիական տնտեսությունների կողմից: Խորհրդատվության ծառայությունների մատուցումը կիրականացվի անհատական խորհրդատվությունների, սեմինարների, դասընթացների, սեզոնային հանդիպումների, հեռախոսային խորհրդակցությունների և այլ ձևերով:

3. Բարձրացնել գյուղացիական տնտեսությունների ինովացիոն ակտիվությունը, ինչը թույլ կտա արտադրանքի նոր տեսակների արտադրության կազմակերպման, օրգանական գյուղատնտեսության մասնաբաժնի ավելացման, կորուստների կրճատման և այլն:
Ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման աշխատանքները կարելի է ակտիվացնել իրականացնելով հետևյալ հաջորդական քայլերը.
   - ✓ Գյուղացիական տնտեսություններին ինովացիոն տեխնոլոգիաների շուրջ տեղեկատվության հասանելիության ապահովում - պետական բյուջեի «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի հանրային իրազեկման ապահովում»[1] հոդվածի շրջանակներում ինովացիոն տեխնոլոգիաների շուրջ տեղեկատվությունը տարածել գովազդատեղեկատվական նյութերի պատրաստման և հրապարակման միջոցով:
   - ✓ Ցուցադրական տնտեսությունների հիմնում - յուրաքանչյուր խոշորացված համայնքում, ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում, ընտրել առավել նոր տեխնոլոգիաներ կիրառող գյուղացիական տնտեսություն: Խորհրդատեղեկատվական ծառայությունների մատուցմամբ և վերապատրաստումների իրականացմամբ գյուղացիական տնտեսությանը դարձնել ցուցադրական տնտեսություն՝ վերհանելով գիտություն – կրթություն – արտադրություն արդյունավետ կապը:
   - ✓ Գյուղացիական տնտեսությունների մասնագիտական վերապատրաստում – «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին»[2] ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետի և 2023թ. պետական բյուջեի «Գիտելիքահենք նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանն աջակցության»[3] հոդվածի շրջանակներում համայնքներում վերապատրաստումների իրականացման համար ընտրել նպատակային խմբերի ճիշտ կառուցվածք, որոնք կնպաստեն նորարարական գործընթացի ներդրման և տարածման աստիճանի վրա: Մասնավորապես՝ հա-

[1] ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջ https://www.gov.am/files/docs/5147.pdf
[2] «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, 23.05.2006թ.
[3] ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջ https://www.gov.am/files/docs/5147.pdf

մայնքներում հայտարարել վերապատրաստման դասընթացների մրցույթ, որին կընդգրկվեն 20-30 մասնակից: Վերապատրաստմանը կընտրվեն այն դիմորդները, ովքեր կունենան բարձրագույն կրթություն, կնախընտրեն արտադրական գործընթացում գիտության և նոր տեխնոլոգիաների կիրառումը, կլինեն բավականին հեշտ կողմնորոշվող, կունենան ստեղծարար, առաջադեմ մտածելակերպ, համայնքում կվայելեն մեծ հարգանք: Վերապատրաստումները կիրականացվեն ցուցադրական տնտեսություններում, ինչը կնպաստի տեղեկատվության տարածմանը և ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման աստիճանի բարձրացմանը:

Եզրակացություն: Գյուղացիական տնտեսությունների գործունեության շուրջ իրականացված հարցումները, վերլուծությունները հնարավորություն են ընձեռնել վերհանել ագրարային ռեսուրսների օգտագործման խոչընդոտներն ու խնդիրները, հատկապես ոռոգման ջրի և վարելահողերի նպատակային օգտագործման, արտադրության կազմակերպման, արտադրական ցուցանիշների հաշվարկման, տեղեկատվության հասանելիության, խորհրդատվական ծառայությունների մատուցման և այլնի առումով:

Առաջարկությունների ներդրումը հնարավորություն կտա ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմամբ՝ նպաստելու գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների կայացմանը, մրցունակության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Ոսկանյան, Ա. Հայրապետյան, Ա. Քարտաշյան // Գյուղատնտեսական զարգացմանն ուղղված ինովացիոն քաղաքականությունը և տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը // Материалы международной научной конференции по проблемам продовольственной обеспечености и биоразнообразия / НАУА, Пед. Кол.: Д. П. Петросян и др.- Ереван, Изд-во НАУА, 2014
2. «ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ», հաշվետվություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հուլիս, 2007, https://employment.am/am/36/free.html
3. «Ագրոմշակույթ» գյուղատնտեսական պարբերական, # 10, CARD, http://agromshakuyt.card.am/%D5%A8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%86%D5%A5%D6%80%D5%B4%D5%A5%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5/
4. Գյուղատնտեսության աջակցության ծրագրեր 2022թ. տարեկան հաշվետվություն https://mineconomy.am/media/22735/2022.pdf
5. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բեր-

քատվությունը 2021 թվականին, ՀՀ ՎԿ, Երևան 2022թ., https://www.armstat.am/file/article/29_gt__2021.pdf
6. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2022 թվականին, ՀՀ ՎԿ, Երևան 2023թ., https://www.armstat.am/file/article/29_gt_2022.pdf
7. «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, 23.05.2006թ.
8. «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն», https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf
9. Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջ https://www.gov.am/files/docs/5147.pdf
10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022թ., Երևան 2022, էջ 353, https://armstat.am/file/doc/99533308.pdf
11. «Հարմարվողականության ազգային պլան (ՀԱՊ)՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագիր, Երևան 2020թ. http://natureic.am/Content/announcements/12692/NAP_Agriculture%20assessment%20report_arm_FINAL.pdf
12. Հ. Ջավադյան, Ի. Փանոսյան//«Ագրարային խորհրդատվական համակարգերի զարգացման փորձը և կիրառման հնարավորությունները ՀՀ-ում (ԵՄ երկրների օրինակով)»//Տնտեսության ժամանակակից հիմնահարցեր>> Ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 2-րդ գիտաժողով, 2014, էջ 126-130
13. Հ. Ջավադյան, Ի. Փանոսյան//Գյուղատնտեսության խորհրդատվական ծառայությունների ֆինանսավորման կատարելագործման մի քանի հարցեր// Ագրոգիտություն, Երևան, 11-12, 2016, էջ 320-325
14. С. Аветисян, А. Арутюнян// Развитие плодоводства как важная состовляющая повышения эффективност и землепользования// ИЗВЕСТИЯ национального аграрного университета Армении. 1(45) 2014

References

1. A. Voskanyan, A. Hayrapetyan, A. Qartashyan // Gyughatntesutyan zargacmann ughghvats inovacion qaxaqakanutyunn ev texnologianeri nerdrman anhrajeshtutyuny// Materialy mezhdunarodnoy nauchnoy konferentsii po problemam prodovolstvennoy obespechenosti i bioraznoobraziya / NAUA, Ped. Kol.: D. P. Petrosyan i dr.- Yerevan, Izd-vo NAUA, 2014
2. «Ashxatashukayi usumnasirutyun gyughakan hamaynqnerum», hashvetvutyun HH ashxatanqi ev socialakan harceri naxararutyun, Hulis 2007, https://employment.am/am/36/free.html

3. «Agromshakuyt» gyughatntesakan parberakan, # 10, CARD, http://agromshakuyt.card.am/%D5%A8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%86%D5%A5%D6%80%D5%B4%D5%A5%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5/
4. Gyughatntesutyan ajakcutyan tsragrer 2022t. tarekan hashvetvutyun https://mineconomy.am/media/22735/2022.pdf
5. Gyughatntesakan mshakabuyseri canqayin taratsutyunnern, bazmamya tnkarkneri taratsutyunnery, hamaxarn berqy ev mijin berqatvutyunn 2021 tvakanin, HH VK, Erevan 2022t., https://www.armstat.am/file/article/29_gt__2021.pdf
6. Gyughatntesakan mshakabuyseri canqayin taratsutyunnern, bazmamya tnkarkneri taratsutyunnery, hamaxarn berqy ev mijin berqatvutyunn 2022 tvakanin, HH VK, Erevan 2023t., https://www.armstat.am/file/article/29_gt_2022.pdf
7. «Inovacion gortsuneuyan petakan ajakcutyan masin» HH orenq, 23.05.2006t.
8. «Hayastani Hanrapetutyan gyughatntesutyan volorti tntesakan zargacumn apahovox himnakan ughghutyunneri 2020-2030 tvakanneri razmavarutyun», https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf
9. Hayastani Hanrapetutyan karavarutyan pashtonakan kayqej https://www.gov.am/files/docs/5147.pdf
10. Hayastani vichakagrakan taregirq 2022t., Yerevan 2022, ej 353, https://armstat.am/file/doc/99533308.pdf
11. «Harmarvoghakanutyan azgayin plan (HAP)՝ Hayastanum mijnajamket ev erkara-jamket harmarvoghakanutyan planavorum» MAZC-KKH tsragir, Yerevan 2020t. http://natureic.am/Content/announcements/12692/NAP_Agriculture%20assessment%20report_arm_FINAL.pdf
12. H. Javadyan, I. Panosyan//«Agrarayin xorhrdatvakan hamakargeri zargacman pordzy ev kirarakan hnaravorutyunnery HH-um (EM erkrneri orinakov)»// Tntesutyan jamanakakic himnaharcer>> Usanoghneri, aspirantneri ev eritasard gitakanneri mijazgayin 2-rd gitajoghov, 2014, ej 126-130
13. H. Javadyan, I. Panosyan //«Gyuxatntesutyan xorhrdatvakan tsarayutyunneri finan-savorman katarelagorcman mi qani harcer// Agrogitutyun, Yerevan, 11-12, 2016, ej 320-325
14. S. Avetisyan, A. Arutyunyan// Razvitie plodovodstva kak vazhnaya sostovlyayush-chaya povysheniya effektivnost i zemlepolzovaniya// IZVESTIYa natsionalnogo agrarnogo universiteta Armenii. 1(45) 2014

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշոտ Երջանիկի Ոսկանյան
Կարինե Պետրոսի Մնացականյան
Մարգո Վարդանի Ղազարյան

Համառոտագիր: Ագրոպարենային համակարգում առանցքային է գյուղացիական տնտեսությունների դերակատարությունը, ապահովում են գյուղատնտեսության համախառն արտադրանքի 94.2 տոկոս: Ագրարային (հողային, ջրային, աշխատանքային և այլն) ռեսուրսների արդյունավետության բարձրացումը օրախնդիր է: Իրականացված հարցումները և վերլուծությունները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսությունների արտադրական հնարավորությունների օգտագործման ներկայիս վիճակը չի նպաստում գյուղատնտեսության դինամիկ զարգացմանը և պարենային անվտանգության անհրաժեշտ մակարդակի ապահովմանը: Նշվածով պայմանավորված՝ հոդվածի ուսումնասիրության նպատակ է դիտարկվել գյուղացիական տնտեսություններում բացահայտել դրանցում ագրարային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և խնդիրները՝ առաջադրելով լուծման ուղիներ:

Նպատակի իրագործման համար խնդիր է դրվել վերլուծել գյուղացիական տնտեսությունների գործունեությունը, կուտակված խոչընդոտները, հողային, ջրային, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների օգտագործումը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են դիալեկտիկական, գիտական աբստրակցիայի, հարցումների, վերլուծության մեթոդները:

Հաշվի առնելով առաջադրված նպատակն ու խնդիրները, ինչպես նաև իրականացված հարցումները՝ տրվել են մոտեցումներ (հայտարարագրերի կիրառում, ռեեստրի վարում, ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման ճանապարհային քարտեզ), որոնք հնարավորություն կտան ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմամբ՝ նպաստելու գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների կայացմանը, մրցունակության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Բանալի բառեր. գյուղացիական տնտեսություն, ագրարային ռեսուրսներ, գյուղացիական տնտեսությունների դասակարգում, հարցումներ, վերլուծություն, հիմնախնդիրներ:

ИСПОЛЬЗОВАНИЕ И ПРОБЛЕМЫ АГРАРНЫХ РЕСУРСОВ В ПЕРВИЧНЫХ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ ПРОИЗВОДСТВЕННЫХ ЕДИНИЦАХ РА

Ашот Ерджаникович Восканян
Карине Петросовна Мнацаканян
Марго Вардановна Казарян

Аннотация. В агропродовольственной системе ключевую роль играют крестьянские хозяйства, они обеспечивают 94.2% валовой продукции сельского хозяйства. Повышение эффективности аграрных (земельных, водных, трудовых и т.д.) ресурсов является актуальным. Проведенные опросы и анализ показывают, что нынешнее состояние использования производственных возможностей крестьянских хозяйств не способствует динамичному развитию сельского хозяйства и обеспечению необходимого уровня продовольственной безопасности. В связи с вышеизложенным, целью исследования статьи было выявление эффективности и проблем использования аграрных ресурсов в крестьянских хозяйствах, предложив пути их решения.

Для реализации цели поставлена задача проанализировать деятельность крестьянских хозяйств, накопившихся препятствий, использование земельных, водных, трудовых, финансовых ресурсов.

В ходе исследования использовались методы диалектики, научной абстракции, опросов, анализа.

Учитывая поставленные цели и задачи, а также проведенные опросы, были даны подходы (применение деклараций, ведение реестра, дорожная карта по внедрению инновационных технологий), которые позволят эффективно использовать ресурсный потенциал для содействия развитию первичных сельскохозяйственных производственных единиц, повышению уровня конкурентоспособности и продовольственной безопасности.

Ключевые слова: Крестьянское хозяйство, аграрные ресурсы, классификация крестьянских хозяйств, опросы, анализ, проблемы.

THE USE AND ISSUES OF AGRICULTURE RESOURCES IN PRIMARY UNITS OF RA AGRICULTURE PRODUCTION

Ashot Yerjanik Voskanyan
Karine Petros Mnacakanyan
Margo Vardan Ghazaryan

Abstract. The farms have a key role in the agro-food system of RA as they provide 94.2% of the gross agriculture output. Increasing the efficiency of agricultural resources (land, water, labor, etc.) is a matter of primary importance. The conducted surveys and analyses show that the current state of utilization of agriculture production opportunities does not contribute to the dynamic development of agriculture and ensuring the necessary level of food security. Due to the above-mentioned fact, **the article aims** to identify the effectiveness and problems of using agrarian resources in farms and proposing ways of solutions.

To achieve the goal, **the task** was set to analyze the activities of agricultural farms and the accumulated obstacles, the use of land, water, labor, and financial resources.

In the scope of the research, dialectical, scientific abstraction, survey, and analysis methods were used.

Taking into account the goal and tasks of the article, as well as the conducted surveys, approaches were given (use of declarations, registry management, road map for the introduction of innovative technologies), which will enable the effective use of resource potential to contribute to the establishment of primary agricultural production units, increasing the level of competitiveness and food security.

Keywords: Agriculture, agriculture resources, classification of farms, surveys, analysis, problems.